

«ԱԼԲԱՆԻԱ», «ԱՂՎԱՆՔ» ԵՎ «ԱՌԱՆ» ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ

Բ. Ա. ՈՒԼՈՒԲԱՅԱՆ

Արևելյան Անդրկովկասի հին պատմության համար կարևոր նշանակություն ունի «Ալբանիա», «Աղվանք» և «Առան» տեղանունների ճիշտ մեկնաբանությունը:

Մեր թվականության առաջին դարից սկսած՝ հույն և հռոմեացի պատմիչները վկայել են, որ Արևելյան Անդրկովկասում գոյություն ունի Ալբանիա երկիր-պետություն՝ ընդգրկված Կովկասյան լեռնաշղթայի և Կուր գետի արանքում:

Հասկանալի պատճառով հայկական աղբյուրներն այս Ալբանիայի մասին տեղեկություններ կարող էին հաղորդել միայն V դարի սկզբից հետո: «Ալբանիա» անունն այս աղբյուրներում կարող էր ենթարկվել հայերենի օրենքներին և դառնալ «Աղվանք»: Այդպես էլ եղավ. հայ հեղինակների մոտ «Ալբանիա» անունն սկսեց գործածվել որպես «Աղբանիա» — «Աղվանք» (գրաբարում՝ «Աղուանք»):

Սակայն V դ. սկսած՝ «Աղվանք» տեղանվանը վիճակված չէր հայոց մոտ ցույց տալ հույների ու հռոմեացիների ճանաչած երկիր-պետությունը, որովհետև բռնակալ Պարսկաստանը նախկին Ալբանիայից և Հայաստանի Ուտիք ու Արցախ նահանգներից կազմել էր մի վարչական միավոր՝ մարզպանություն, որը կառավարվում էր պարսիկ մարզպանի կողմից և նույնպես կոչվում էր Աղվանք անունով:

Այսպիսով, հայ մատենագրությունն «Աղվանք» պիտի կոչեր պարսկահպատակ մարզը (որի հարավային սահմանն էր Սրասխ գետը), իսկ հին իրողություններին անդրադառնալիս էլ՝ նաև հունա-հռոմեական աղբյուրների «Ալբանիա»-ն (որի հարավային սահմանն էր Կուրը):

Ժամանակը շատ բան փոխեց այս նոր մարզի ներսում: 451 թ. հայոց հուժկու ապստամբությունից հետո, հատկապես Պարսկաստանի ներսում տեղի ունեցած խլրտումներից օգտվելով՝ Կուրի աջափնյա Արցախ և Ուտիք նահանգների Առանշահիկ հայ իշխանական տոհմը գլուխ է բարձրացնում, իրեն հայտարարում թագավորություն: «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկի մեջ կան հավաստի տվյալներ, որոնք հաստատում են, որ այս ժամանակից հետո Առանշահիկներին որոշ առումով հպատակ էին նույնիսկ անդրկուրյան Աղվանքի գավառները:

Հայկական աղբյուրներն Առանշահիկների երկիրը, մարզպանության ժամանակներից սկսած, կոչում էին տարբեր անուններով՝ «Արևելք», «Արևելից կողմանք», «Հայոց արևելից կողմանք», որովհետև այն հին Հայաստան երկրի արևելյան մասն էր հանդիսանում, «Աղուանից կողմանք», որովհետև այդ նույն վարչական միավորն իսկապես գտնվում էր նախկին Աղվանքի (Ալբանիայի) կողմից, նրա անմիջական հարևանն էր. նաև՝ «Աղուանք», որովհետև մշտնում էր պարսկահպատակ «Աղուանք» մարզի մեջ: Այս պայմաններում աս-

տիճանաբար սովորական է դառնում «Աղուանք»—«Աղվանք» անունը, որն այլևս չպետք է անշատվեր այդ երկրամասից:

Ի հակակշիռ պատմական աղբյուրների ընձեռած բազմաթիվ արժանահավատ վկայությունների ու փաստերի, պատմագիտական գրականության մեջ իշխում է մի մտայնություն, որը նույնական է հայտարարում «Ալբանիան» և «Աղվանքը»: Այս տեսակետն ընդունող հեղինակների պնդումով՝ Ալբանիա էր կոչվում Կովկասյան լեռնաշղթայից մինչև Արաքս գետն ընկած տերիտորիան, իսկ «Ալբանիա» տեղանունն էլ, իբր, բխում է այդ տերիտորիայի վրա ապրած միասնական ալբան ժողովրդի (կամ ալբան ցեղի) անունից:

Այսօրինակ մեկնաբանությունն աղավաղում է ինչպես բուն Աղվանքի (Ալբանիայի), այնպես էլ Հայաստանի հյուսիս-արևելյան նահանգների պատմությունը, աշխարհագրությունը, ազգագրական ու մշակութային վիճակները:

* * *

Առդ, ինչ է նշանակում «Ալբանիա». օտարների դրած անո՞ւնն է դա, թե՞ տեղաբնիկներն են իրենց այդպես կոչել:

Ամմիանոս Մարկելիկոսի (IV դար) և Մովսես Խորենացու (V դար) ժամանակներից սկսած՝ մատենագիրներն ու պատմաբանները մեկնաբանում են «Ալբանիա» տեղանունը: Բայց և այնպես մինչև այսօր պարզ ու անառարկելի պատասխան չկա:

Ամմիանոսը հարևանցիորեն հիշում է, որ «ալբաններն իրենց անունն ստացել են լեռներից»¹, սակայն չի բացատրում, թե ինչպե՞ս:

Մովսես Խորենացու բացատրությամբ, Աղվանք անվան հիմքում ընկած է համարվում աղու (անուշ, բաղք) բառը²:

1840-ական թթ. ադրբեջանցի գիտնական ու հասարակական գործիչ Բաբխանովը փորձեց «Ալբանիա»-ն բացատրել «ալբան» անվամբ, նկատի ունենալով լատինական «ալբի» բառը՝ «սպիտակ» իմաստով³:

Բաբխանովից շուրջ երկու տասնամյակ հետո Իվան Շոպենն էլ Ամմիանոսի նման «Ալբանիան» մեկնաբանում է որպես «լեռների երկիր»⁴, բայց չի բացատրում, թե ինչ լիզվով և ինչու է այդպես կոչվել:

Կովկասագետ Կ. Վ. Տրեբերի վկայությամբ՝ Ն. Յա. Մառն էլ ունի «Ալբանիա» անվան այսպիսի բացատրություն: Տրեբերը երկու անգամ անդրադառնում է Մառի մեկնաբանությանը, առանց նշելու տեղը⁵:

Որքան հայտնի է, «Ալբանիա»—«Աղվանք» տեղանվան հանգամանալից ուրիշ որևէ մեկնաբանություն չի եղել, եթե չհաշվենք Կ. Վ. Տրեբերի, Վ. Յ. Մինորսկու և Մ. Տ. Երեմյանի հարևանցի գիտողությունները, որոնք հիմնականում դուրս չեն եկել եղած փորձերի սահմաններից: Վերջերս «Ալբանիա»—«Աղվանք»—«Առան» տեղանունների պատմագիտական քննության փորձ է կատարել նաև Յու. Բ. Յուսիֆովը:

¹ Ամմիանոս Մարկելիկոս, գիրք 23, գլ. 5, § 16:

² Մովսես Խորենացի, Պատմութիւն հայոց, Տիգրս, 1913, էջ 112—113:

³ Абабас-Кули-Ага Бакиханов, Гюлистан-и Ирам, Баку, 1926, էջ 9:

⁴ И. Шопен, Новые заметки на древние истории Кавказа и его обитателей. СПб., 1866, էջ 374:

⁵ К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании, М.—Л., 1959, էջ 5: նույնի՝ К вопросу о культуре Кавказской Албании, М., 1960, էջ 1:

Վկայակոչելով Վ. Ֆ. Մինորսկուն, Ս. Տ. Երևանին ու Կ. Վ. Տրեբին, Յուսիֆովը գտնում է, որ «Ալբանիա», «Աղվանք», «Առան», «Ռանի» նույն երկրամասի անվան տարբեր ձևերն են։ Նա իրավամբ գտնում է, որ «...Հայկական «Աղվանք» անունը և հունա-հռոմեական «Ալբանիան» կաղմված են նույն արմատից»⁶։ Անշուշակում է՝ «Աղվանք»-ը փոխառված, բայց հայացված անունն է Ալբանիա երկրի»⁷։ Այս գրքում է, որ «հին հունա-հռոմեական ու արաբական պատմիչների հաղորդած տեղեկությունների հիման վրա կարելի է ասել, թե՛ «Ալբանիա»-ն և «Առան»-ը Աղբեջանի տերիտորիայի կոնկրետ անուններն են եղել։ Հունա-հռոմեական (անտիկ) պատմաբաններն այս տերիտորիան կոչել են «Ալբանիա», արաբ հեղինակները՝ «Առան կամ Ալբան»⁸։ Սակայն իր ստուգաբանական քննությունները կատարելիս Յուսիֆովը «Ալբանիա—Աղվանք» իրումբն անջատում է «Առան—Արան—Ռանի» խմբից, գտնելով, որ «Արան»-ը կաղմված է «ար»-ից (որ դադստանցի լակերի լեզվով նշանակում է հարթավայր) և դարգիներին «ան» ածականակերտ ածանցից»⁹։ Յուսիֆովին հայտնի է նաև, որ սկզբնապես Առան է կոչվել Կուրի աջափնյակը՝ հարթ ու տաք մի վայր։ Ուստի նա պատահական չի համարում, որ այժմյան աղբեջաներինում «արան» նշանակում է «տաք ու հարթ տեղանք»¹⁰։

Յու. Բ. Յուսիֆովը այնուհետև ստուգաբանական էքսկուրսներով փորձում է ապացուցել, որ «Ալբանիա»-ն առաջացել է «հալոյեն», «հալբի» ցեղանունից և «Ալբանիա» նշանակում է «հալ»-երի երկիր»¹¹։

Յու. Բ. Յուսիֆովը չի նկատում, որ այստեղ արդեն ստացվում է հակասություն. «Ալբանիան» ու «Աղվանքը» նշանակում են «հալ»-երի երկիր, իսկ «Առանը»՝ «հարթ ու տաք տեղանք», ապա սրանք նույն անունները չեն։

«Ալբանիա—Աղվանք»-ի նման մեկնաբանությունը դժվար է ընդունել նաև այն պատճառով, որ այստեղ մի տեղանունը գոյացած է համարվում տեղաբնիկ տարբեր ցեղանուններից ու սրանց մնացորդներից, որ գործնականորեն անհնար է պատկերացնել։

Բայց ի՞նչ է նշանակում «Ալբանիա»։ Կետերենից սերված եվրոպական շատ լեզուներ, ինչպես անգլերենը, ֆրանսերենը և այլն, ունեն «ալպ»—«ալբ» բառը, որ նշանակում է «առք», «գագաթ», «բարձունք»։ Եվ քանի որ «իա» մասը միշտ էլ տեղանունների հիմքերին է կցվում՝ նշանակելով «երկիր», «պետություն», ուստի «Ալբանիա» պետք է նշանակի «լեռների երկիր»։

Հայտնի է, որ «Ալբանիա» կելտական անունը կա Շոտլանդիայում («Ալբանիա»-ն Շոտլանդիայի հին անունն է)¹², Իտալիայում¹³, Բալկանյան թերակղզու վրա և, վերջապես, Անդրկովկասի հյուսիս-արևելյան մասում։ Հատկա-

6 Ю. Б. Юсифов, О наименованиях «Албания» и «Арран», Известия АН Азерб. ССР (сер. общ. наук), 1961, № 10, էջ 25։

7 նույն տեղում։

8 նույն տեղում, էջ 30 (տե՛ս հոդվածի աղբեջաներեն համառոտությունը)։

9 նույն տեղում, էջ 25։

10 նույն տեղում։

11 նույն տեղում։ Հմմտ. Н. Я. Марр, Кавказские племенные названия и их местные параллели, Пг., 1922, էջ 25։

12 «The Encyclopaedia Britannica», Cambridge, 1910, էջ 187։

13 «Ալբանական լեռներ» են կոչվում Հոմից հարավ-արևելք գտնվող հանգած հրաբուխները։ Կենտրոնում բարձրանում է «Mons Albanus»-ը (տե՛ս «Большая Советская Энциклопедия», т. 2, М., 1950, էջ 161)։

նշական է, որ բոլոր այս վայրերն էլ լեռնոտ են և համապատասխանում են իրենց իսկ «Ալքանիա» — «լեռների երկիր» անվանը:

Պատմական այս փաստը բացատրվում է կելտական ցեղերի կատարած ասպատակություններով, որոնց ընթացքում նրանք սեփական «Ալքանիա» անունը թողել են իրենց սվաճած շատ երկրներում:

Կելտերի հին բնակավայրերն արևելքում հասնում էին մինչև Ալպերը, և բնական է, որ այս լեռներն իրենց անունն ստացել են տեղաբնիկներից («ալպ» — սառ, դադաթ, բարձր):

Մ. Թ. ա. առաջին հազարամյակի կեսերին կելտ-գալլերի ալիքները հասել էին Փոքր Ասիա, այնտեղ ստեղծել Գալատիա (հայկ. աղբյուրներում՝ Գաղատիա) պետությունը¹⁴:

Ինչ վերաբերում է Կովկասյան, ավելի ճիշտ Անդրկովկասյան Ալքանիային, հավանական է ենթադրել, որ կելտական տեղաշարժերի ալիքն այստեղ է հասել մ. թ. ա. II—I դարերում:

Ուշագրավ է, որ ըստ «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկի, կելտերը կովկասաբնականներ են: Պատմության Ա գրքի Բ գլուխն ունի հետևյալ հետաքրքիր հիշատակությունը. «Եւ որդիք Յաքեթի՝ Գամեր և ի նմանէ Գամիրք, Մագոգ և ի նմանէն՝ Կեղտք և Գաղատացիք»¹⁵: Գալլերի կամ գաղատացիների մասին խոսում է նաև Խորենացին¹⁶, հայերի և կելտ-գաղատացիների ղինական համերաշխությունն ընդգծելով հետևյալ տեղեկությամբ. Անտիոքոս թագավորը «զՎասան նահապետ Ամատունեաց արևելեան գնդան և զԳաղատացի զօրս ընդ նմա առաքեաց զկողմամբք Ատրպատականի, ունեւ պահ յարքայէն Պարսից»¹⁷:

Անհրաժեշտ ենք համարում այստեղ բերել կարևոր նշանակություն ունեցող պատմական մի վկայություն ևս, որը դարձյալ վերաբերում է կելտ-գաղատացիներին ու Կովկասի առնչակցություններին:

Եղիշեն Կովկասյան լեռնաշղթայի հյուսիսային լանջերի վրա ապրողների մասին խոսելիս գործ է ածում «խալանդուրք» և «աշխարհ հայլանդրաց»¹⁸ անունները, որոնք մինչև օրս հետադոտողների կողմից կամ համարվել են անբացատրելի թյուրիմացություն, կամ էլ արժանացել են ենթադրական ու կամայական բացատրությունների, ինչպես «հոների արքայական հորդայի անուն»-ից¹⁹ մինչև «խալանդուրք—ընտիր թուրք»²⁰, կամ՝ «եկվոր թուրք»²¹:

Եղիշեի պատմության մեջ այս բառն օգտագործված է երեք անգամ, երկուսը՝ սեռական հոլովով, մեկն՝ ուղղական: Առաջին անգամ. «Դադարեցին

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Մ ո Վ ս ե ս Կ ա դ ա ն կ աս տ վ ա ց ի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 10:

¹⁶ Խ ո Ր Ե Ն ա ց ի, էջ 103, 142, 262:

¹⁷ Նույն տեղում, էջ 262:

¹⁸ «Եղիշեի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», Երևան, 1957, էջ 12, 141, 198:

¹⁹ Յ. Մարկվարտը «խալանդուրք»-ը բացատրել է որպես «հոնաց արքայական հորդա» (տե՛ս „Eranschahr nach der Geographie des Ps. Moses Chorenaci“, Berlin, 1901, էջ 96:

²⁰ Մ. Սեդրակի կարծիքով՝ «խալանդուրք» նշանակում է՝ «ընտիր թուրքներ» (տե՛ս նրա Јегишенин вэ Мовсес Гагангайтуглуунун тарих эсэрлэриндэ етник „Хайландург“ ысталаһы һаггында. „Известия АН Азерб. ССР (серия обществ. наук), 1965, № 6):

²¹ В. Г у к а с я н, К освещению некоторых вопросов истории Азербайджана в монографии «Азербайджан в VII—IX вв.». Известия АН Азерб. ССР (серия истории), 1968, № 4, էջ 121:

հայկանդուրը Լիանել ընդ պահակն ճորայ»։ Կարծում ենք, որ «խայկանդուր»-ը գրիչները չեն հասկացել և փորձել են հայերեն կարգալի Ստացվել է «հայել ընդ ուրուք»²², որը ոչ մի իմաստ չունի տվյալ կապակցության մեջ. «դադարեցին հայիլ ընդ ուրուք Լիանել ընդ պահակն ճորայ»։ Հրատարակիչներն էլ այս բառն ընտրել են օգտագործված «խայկանդուր» ձևի օգնությամբ և ստացել են «խայկանդուր»։ Քանի որ մեր ունեցած ձեռագրերում գերիշխողը «Հայել ընդ ուրուք» ձևով տարբերակն է, մենք կարող ենք հավասարապես կարգալի և՛ «խայկանդուր», և՛ «հայկանդուր»։ Մեր կարծիքով՝ այս «հայկանդուրը» կելտական բառ է (highlandeur), որ նշանակում է «լեռնաբնակ»²³։ Այժմ էլ դեռևս այդպես են կոչվում Շոտլանդիայի (հին Ալբանիայի) լեռնային մասերի բնակիչները։ Իսկ «Հայկանդ»-ը, ինչպես կելտերի, այնպես էլ նրանց ժառանգորդ անգլիացիների լեզվով նշանակում է «լեռնաստան», «բարձրագիր տեղ»։

Այս ուշադրավ փաստը, եթե ճիշտ է նրան տրված մեր մեկնաբանությունը, գալիս է մի անգամ ևս շեշտելու կելտ-գաղատացիների սերտ կապը Կովկասի հետ և առավել հաստատուն հիմքի վրա դնելու Արևելյան Անդրկովկասի անդրկուրյան տերիտորիային նրանց տված «Ալբանիա» տեղանվան իսկությունը։

Հետագայում, երբ եկվոր թուրքական ցեղերն ամրացան Կուրի ավազանում և հին Ալբանիայի դաշտային մասի բնակիչ ցեղերին մասամբ ձուլեցին՝ իրենց մեջ, մասամբ էլ մղեցին դեպի հյուսիս՝ նրանց առավել լեռնոտ բնաշխարհը, Ալբանիան բաժանվեց երկու մասի՝ հարավային կամ հարթավայրային, որը վաղուց ի վեր կոչվում էր Շիրվան, և լեռնային, որի համար եկվորները նոր անուն չփնտրեցին, այլ թարգմանեցին հին ու հայտնի երկրանունը. «Ալբանիա»—«լեռների երկիրը» դարձնելով «Դաղստան»։

Այսպիսով, «Ալբանիա» չի նշանակել «ալբանների երկիր»։ Այն մեր կարծիքով կելտական «լեռների երկիր» անունն է, որից էլ երկրի բնակիչները կոչվել են «ալբանցիներ»։ «Ալբանիան» էթնիկական անուն էլ չէ, քանի որ ըստ Ստրաբոնի՝ ալբանցիներ էին Ալբանիա երկրում բնակվող 26 ցեղերը։

Այժմ տևեցինք, թե ինչ ըմբռնումներ կային «Ալբանիա» երկրի, նրա բնիկների ու սրունց ներքին կյանքի մասին իրենց մերձավորագույն հարևանի՝ Հայաստանի մեջ։

Փավստոս Բուզանդը նանաչում է Կուրից հյուսիս բնակվող տարալեզու, խառնիճաղանձ ցեղերին, որոնց զխավորն էր Մազթթաց թագավորը, և սրբաբերկիրը Հայաստանի հետ սահմանակից էր Կուր գետով. «Եկն անց ըստ իւր սահմանն ընդ գետն մեծ ընդ Կուր, և եկն տարածեցաւ ելից զերկիրն Հայոց աշխարհին»²⁴։

Նախամարզայանակաւն իրականությունից խոսելիս Բուզանդն անդրկուրյան երկրի Աղվանք անունն էլ է տալիս։ Պատմում է, որ Պապ թագավորը (368—374) և սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը վերանվաճում են Արշակ Բ-ի դեմ ապստամբած պավանները «և զԿուր գետ՝ որպես և յառաջն լեալ էր,

22 Մաշտոցի սևվ. Մատենադարան, ձև. №№ 1890 (1174 թվականից), 4509 (1310 թ.), 1920 (1569 թ.), 1862 (1641 թ.), 1404 (1664 թ.), 2639 (ժէ դար), 1889 (1675 թ.), 1482 (1678 թ.), 4351 (1689 թ.), 4584 (1668 թ.), 573 (ժէ դար), 1458 (1705 թ.)։

23 «Բառարան անգղիարէն և հայերէն», աշխատասիրեալ ի Վ. Յարութիւն վ. Ազեղեան, Վենետիկ, 1868, էջ 362-ր. «Англо-русский словарь», сост. В. К. Мюллер, М., 1962, էջ 476. «Англо-русский словарь», под ред. О. С. Ахмановой, М., 1968, էջ 257; «Большая Советская Энциклопедия», т. 13, М., 1952, էջ 244. т. 48, М., 1957, էջ 157.

24 Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 24։

ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն իւրեանց սահման արարեալ կացուցանէին»²⁵,

IV դարի առաջին կեսին հայոց արեւելյան գավառների եպիսկոպոս Գրիգորիսը պնացել էր Մազքթաց երկիրը՝ այնտեղ քրիստոնեություն տարածելու: Բարբարոսները նրան տանջամահ արին: Այն ժամանակ Գրիգորիսի հետ գնացած սարկավագները նրա դիակը տեղափոխեցին Արցախի Հաբանդ գավառը և թաղեցին: Ամարաս ավանում: Սա, իհարկե, նախամարդպանական շրջանի իրողությունն է: Մինչդեռ այս պատմությունն անելիս Փավստոսն արդեն օգտվում է մալգուդական ժամանակի տարբերակումներից և Արցախի Հաբանդ գավառը դնում է «Աղվանից կողմանց» մեջ, միաժամանակ շմոռանալով զգուշացնել, որ դա հալոյ սահմանների ներսում է. սարկավագները Գրիգորիսի դիակը «...բերին ի գտառն իւրեանց ի կողմանս Աղուանից, ի սահմանս Հայոց ի Հաբանդ, ի գէօղն որ անուանեալ կոչի Ամարադ»²⁶:

«Աղվանք»-ի մասին հայ մատենագրության մեջ եղած տեղեկությունների հիմնական: տվումը Մովսես Խորենացու բացատրությունն է, որը հասկանալի կնշանակի շիտակ ելակետ ունենալ Արեւելյան Անդրկովկասի հին պատմությունը՝ ճիշտ բացատրելու համար:

Խորենացին Մեծ Հայքի պետության արեւելյան գաղառների վրա կարգված առաջին կուսակալ-իշխան է ճանաչում Առանին, որ հայկազուն Սիսակի զավակներից է, ապա գտնում է, որ Առանի սերունդներից են առաջացել այդ գաղառների իշխանական տները, ինչպես նաև Ուտիքի բնակչությունը:

Ըստ Կ. Վ. Տրեւերի բացատրության, Խորենացին ասել է՝ Առանն Ալբանիայի առասպելական-ավանդական թագավորն է, որի անուշ (աղու) բարբիջ առաջացել է «Ալբանիա» տեղանունը²⁷: Գիտնականը կարծում է, որ «Առան»-ը լույս է սփռում մինչև այժմ չլուծված այն հարցի վրա, թե ինչպես են հնում իրենք իրենց կոչել ալբանները. «Հնարավոր է, որ երկիրն իսկապես կրել է ավանդադարյն նախնի Առանի անունը, իսկ հույներն ու հռոմեացիները կարող էին ալդ անվանը տալ իրենց լեզուներին մոտիկ հնչողություն»²⁸: Այսբանից հետո էլ Տրեւերը դտնում է, որ Առանի ժառանգներից են սերվել «հիմնականում Կուրի ձախ ավին բնակվող ցեղերը»²⁹, և «Առանն ավանդական նախահայրն է (проначальник) ալբանական ցեղերի»³⁰:

Կ. Վ. Տրեւերն Առանի ու նրա հոր՝ Սիսակի, շուրջն ստեղծած այսօրինակ տեսության վրա հնարավոր է համարում կառուցել մի վարկած, որով, իբր թե, ըստ Մովսես Խորենացու՝ «Սիսական» կամ «Սյունիք» էր կոչվում Հայաստանի ու Արցախի միջև, Սևանից հարավ գտնվող այն մարզը, որը նախապես չի մտել ալբանական ցեղային միության մեջ»³¹:

Ուրեմն, պարզվում է, որ, ըստ Խորենացու, Սյունիքն ու Արցախը Հայաստան չէին. Արցախը մտնում էր ալբանական ցեղային միության մեջ, և միայն Սյունիքն էր, որ չէր մտնում, բայց չէր մտնում նաև Հայաստանի մեջ,

²⁵ Նույն տեղում, էջ 314:

²⁶ Նույն տեղում, էջ 23:

²⁷ К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании, էջ 4:

²⁸ Նույն տեղում, էջ 136:

²⁹ Նույն տեղում, էջ 66:

³⁰ Նույն տեղում, էջ 144:

³¹ Նույն տեղում, էջ 146:

քանի որ գտնվում էր «Հայաստանի ու Արցախի միջև»։ Եվ այս բոլորն էլ, իբր թե, ըստ Մովսէս Խորենացու։

Իրականում, ըստ Մովսէս Խորենացու, Մեծ Հայքի միասնական սկսու-
թյան հիմնադիր Վաղարշակ թագավորը կարգավորում է իր տերության սահ-
մանները, ապա իշխաններ ու կուսակալներ է նշանակում երկրի բոլոր նա-
հանգների վրա։ Պատմահայրն այս ամենի մասին խոսելուց առաջ հավատաց-
նում է, որ ինքի պատմում է ճշմարիտ պատմություն՝ հեռու առասպելական
դատարկաբանությունից։ «Այս դրոշմ մեծ, և հաւաստի պատմութեամբ լի, և
արժանի բանից ողորկագունից և յոլովից... թողում զառասպելացն բաջա-
ղանս»³²։ Այս հավաստիացումից հետո նա տեղեկացնում է, որ Վաղարշակի
տերությունը հիմնականում ընդգրկում էր հայ ժողովրդին, բրովհետեւ թագա-
վորն իր երկրի համար սահման էր գծել հայոց լեզվի տարածման եղբրքներով՝
«լեւդերբ հայկական խօսիցս»։ Եվ ահա հենց այսպես. «ղեղերբ հայկական խօ-
սիցս... դարեւից հիւսիսոյ կողմանն կարգէ կողմնակալութիւն՝ զայր անուանի
և յամանայն գործ մտաւորութեան և հանճարոյ առաջին, զԱռան, առ մեծ գե-
տովն, որ հատանէ զղաշտն մեծ, որ անուանի Կուր»³³։

Այնուհետեւ Խորենացին նշում է, որ իր պատմության առաջին գրքում մո-
ռացել է հիշատակել այս տեղւոյն, այսինքն՝ Սիսակից սերված այն գունդը, որ
ժառանգել էր Աղվանից դաշտը և այս դաշտի լեռնակողմը՝ Երասխ գետից
մինչև Հնարակերտ սւմրոցը, որը գտնվում էր Կուրի վրա։ «Բայց զայս գիտեա,
զի զցեղս զայս մեծ և անուանի մոռացումն եղև մեղ յառաջնումն մատենին յի-
շատակել զգունդն որ ի Սիսակայ, որ ժառանգեաց զղաշտն Աղուանից և զլեռ-
նակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասխայ մինչև ցամառն որ ասի Հնարա-
կերտ։ և աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք.
զի աղու ձայնէի՝ պնա»³⁴։

Ուրեմն, Սիսակից սերված Առանը կուսակալ կարգվեց Երասխից մինչև
Կուր ընկած երկրամասի վրա (երկու անգամ շեշտվում է հյուսիսային սահմա-
նը. մեկ՝ Կուրը. մեկ էլ՝ Հնարակերտը, որ Կուրի վրա էր)³⁵։ Պատմահայրը միա-
ժամանակ վկայում է, թե ասում են՝ Առանի սերունդներից են ուտիացիները,
ինչպէս նաև Դարդմանքի, Ծավդեից (Արցախի) և Դուզարացոց իշխանու-
թյունները։ «Ի սոցա զաւակաց ասեն սերեալ զաղգն ուտեացոց և Դարդմանաց-
ոց և Ծավդեացոց և Գուզարացոց իշխանութիւնսն»³⁶։

32 Խորենացի, էջ 109։

33 Նույն տեղում, էջ 111—113։

34 Նույն տեղում, էջ 113։

35 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մասն
Ա, Երևան, 1957, էջ 308—309։ J. Markwart. Das Itinärer von Artaxata nach Ar-
mastica. Wien, 1928, էջ 30—31։ К. В. Тревер. Очерк..., էջ 145 և հտ.։ Ս. Տ. Երեմ-
յան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 63։

36 Խորենացի, էջ 113։ Այս հրատարակության մեջ «Գուզարացոց»-ի փոխ. տպված
է «Դարդարացոց», որ սխալ է։ Խոսքը վերաբերում է Գուզարքին. տե՛ս «Մովսէսի Խորենացու
Մատենադրութիւնք», Վենետիկ, 1865, էջ 193, 258։ Նաև՝ Հ. Համբարյան, Գարգարա-
ցիք, թե՛ Գուզարացիք (սշանդես ամսօրյա», 1910, էջ 242)։ Ս. էմինը սույն հատվածի վերջին
նախադասությունը ուսերեն է թարգմանել այսպես. «Говорят, что от потомков Арана
происходят племена ути, гардманы, цоде и княжество Гаргарское» (իմա՝ Гугарское՝
— Բ. Ս.), տե՛ս М. Хоренский, История Арменин, пер. Н. О. Эмина, М., 1893,

Իհարկե, խորենացիով «Ալքանիա»-ի ու «Աղվանք»-ի հարցը չի լուծվում, սակայն պարզվում է երևույթի շատ կարևոր հանգամանք. մեկ՝ որ հայկական աղբյուրների «Աղվանք» տեղանունը, որքան էլ ծագմամբ նույնանա հունա-հույժեական հեղինակների «Ալքանիա»-ի հետ, գործածության ոլորտով, կիրառությամբ երբեմն տարբերվում է նրանից:

Երկրորդ՝ որ «Աղվանք» տեղանունը երկրամասի բնակչության ցեղային նկարագրի հետ ոչ մի կապ չունի, որովհետև, եթե մինչև այսօր հետադոտոլները, որոշ բացառությամբ, «Աղվանք» ասելով հասկանում էին այն երկիրը, ուր, իբր թե, աղվաններ կամ ալքաններ են բնակվել, ապա խորենացու նշած վերոհիշյալ Աղվանքը հայկական երկրամաս է, հայոց լեզվի սահմանների մեջ ընդգրկված աշխարհ: Չմոռանալով, որ նա դրան ղուգահեռ երբեմն էլ Աղվանք ասելով հասկանում է բուն Աղվանքը:

Հնարավոր է, որ պատմիչն այս անվան բացատրության մեջ օգտագործել է միայն առասպելական-ավանդական վարկածը: Սակայն միանգամայն պարզ է նաև մի այլ բան, որ նա ուրիշ ելք կամ ճշմարիտ բացատրություն չի տեսել, որովհետև, եթե երկրամասի ցեղային պատմությունը համապատասխան բացատրություն հուշեի, դժվար թե նա հրաժարվեր այդ բացատրությունից, քանի որ նա «Պատմության» տասնյակ էջերում իր ժամանակ արդեն հայացած այս կամ այն գավառի բնակչության, այս կամ այն իշխանական տոհմի ոչ հայկական անվանը ներկայացնում է ամենայն մանրամասնությամբ:

Ուշագրավ է, որ սկսած խորենացու պատմությունից՝ հայ աղբյուրները Աղվանք ասելիս հիմնականում հասկացել են աշխարհայ հայկական գավառները: Այս պարագան արձանագրել են ինչպես հայ պատմաբաններից ու բանասերներից շատերը, այնպես էլ այլազգի ուսումնասիրողներ Ի. Շոպենը, Կ. Գանը, Ս. Յուշկովը³⁷:

Ձարմանալին այն է, որ այսբանից հետո և հատկապես նրանից հետո, երբ հենց «Աղվանից աշխարհի պատմության» առաջին իսկ էջերում կարդում են, թե Աղվանք է «ի գետէն Երասխայ մինչև ցամուրն Հնարակերտ» (Կուրի վրա)³⁸, — վերցնում ու Կուրից հյուսիս ընկած Կովկասյան Ալքանիայի, նրա թագավորության ու բնակիչ ցեղերի պատմությունն են գրում, հիմնականում բաղելով Մովսես Կաղանկատվացու գրքի տեղեկությունները՝ որպես հին Աղվանքի մասին գրված նյութեր:

Ինթերցողին ենք թողնում դատելու, թե ինչպիսի մոլորություն է այսպիսի պատմությունը, որ գրվել է տարիներ շարունակ և դեռ ոմանց կողմից գրվում է մեր օրերում:

Ձի կարելի ասել, թե հակառակը չի կատարվել: Լեոն էլ, օրինակ, Ալքանիայի մասին Սարաբոնի ու հունա-հռոմեական մյուս հեղինակների տեղեկու-

кн. II, гл. 8. *Խորենացու մոտ ոչ թե „племена“ է, այլ „племя“* («զագգն Ուտեացուց» — „племя утийцев“) և ոչ թե „княжество“ է, այլ „княжества“ (հիշատակությունն). հողանակի թվի հայցական հոլովը, որ վերաբերում է երեքին՝ «Գարգմանացուց, և Մաւղեացուց, և հուգարացուց»):

37 С. В. Юшков, К вопросу о границах древней Албании («Ист. записки» АН СССР, т. I, М., 1937, էջ 137):

38 Մ. Կաղանկատվացի, էջ 14: Ծիշտ է, Կաղանկատվացու մոտ նկատվում է նաև մարզպանական Աղվանքը իր անցյալով հաշվի առնելու որոշակի միտում, սակայն դա նրա մոտ որակ չի կազմում:

թյուններն էր տարածում աջափնյա հայկական գավառների վրա, և հետևանքը լինում էր այն, որ Արցախի բնակիչներ էին կնքվում ալբանական ցեղերն իրենց քաղաքական կյանքով ու կենցաղով:

Սակայն, ի՞նչ է կոչվում ժամանակի աղբյուրագիտական անբավարար մակարդակը նման թյուրիմացությունների տեղիք տալիս էր, ասպա այսօր հրապարակի վրա են տեսնում մեծ թվով հայ և օտար աղբյուրներ, որոնց առկայությունը ոչ մի կհրապարակի հաշտվել վերոհիշյալ հակապատմական մոլորությունների հետ:

Մեր այն մատենագիրները, որոնք Աղվանք ասելիս հիմնականում հասկանում էին Կուրի աջափնյակը, ձախափնյակի համար հաճախ գործ էին ածում Լիփինք և Մազքթաց աշխարհ (կամ Չոդ) անունները: Օրինակ, Կաղանկատվացու պատմության մեջ «Ալբանիա»-ի փոխարեն տիրական է «Լիփինք», «Լիփնաց աշխարհ», որը բռնում է անդրկուրյան Ալբանիա երկրի արևմտյան մասը և հս. րավից Աղվանքին սահմանակից է Կուր դեպքով: Աղվանքի թշնամիները Կուրն անդնում են, մտնում Ուտիք, և «ինքեանք անդրէն դարձեալ՝ բնակէին ի կողմանս դաշտին առ սահմանօքն Լիփնաց»³⁹: Աղվանքի բանագնացներն իրենց երկրի սահմանն «ընդ գետն մեծ Կուր» անցնում են, ապա այդ սահմանից հետո տասներկու օր քայլում Լիփնաց երկրով, մինչև հասնում են նրանց մայրաքաղաքը⁴⁰:

Միայն Կաղանկատվացին չէ, որ Աղվանքի հյուսիսային հարևան է ճանաչում Լիփնաց աշխարհը:

Կովկասագետ Շոպենն այն համոզմունքն է հայտնել, թե «Լիփինք-Լրնիա» տնվան մեջ «չի կարելի շճանաչել խաթարված վանկական «Ալպանի», «Ալբանիա» կամ «Ալանիա» բառը»⁴¹:

Շոպենի յոթանասուն տարի հետո «Ալբանիա-Լրնիա-Լիփինք» հարցին անդրադարձավ Ս. Վ. Յուզկովը, և նա էլ, Շոպենի կարծիքին անտեղյակ, իր հերթին հաստատեց, որ «Լրնիան (Լիփինքը) Ալբանիա բառի ձևափոխությունն է»⁴²: Իսկ Ս. Ս. Երեմյանը 1939 թ. համադրելով մի շարք տեղանուններ, վերջստին հաստատեց «Ալբանիա»—«Լրնիա»—«Լիփինք» բառերի նույնությունը⁴³:

Հունա-հռոմեական հեղինակների Ալբանիա երկրի արևելյան մասը հայկական աղբյուրներում և հատկապես Աղվանքի պատմության մեջ կոչվում է Մազքթաց աշխարհ կամ Չոդ (Չոդ մայրաքաղաքի անունից): Այստեղ էր նրստում ալբանական կոչված Արշակունի տունը, որին հաճախ էր հաջողվում դառնալ ամբողջ անդրկուրյան երկրի ալբանական ցեղերի գլխավորը⁴⁴:

Ուրեմն, հայկական աղբյուրները, որոնք օտարների համեմատությամբ ավելի հանգամանորեն դիտել են անդրկուրյան երկիրը, այնտեղ տեսնում էին

39 Նույն տեղում, էջ 263:

40 Նույն տեղում, էջ 270:

41 Н. Шопен, *Узл. азбу.*, էջ 373:

42 С. В. Юшков, *Узл. азбу.*, էջ 137—138:

43 С. Т. Еремян, Монсей Каланкатуйский о посольстве албанского князя Вард-Трдата к Хазарскому хакану Алп-Илтиверу, «Записки» ИВ АН СССР, т. VII, 1939, էջ 148—149:

44 Բուզանդ, էջ 24: Խորենացի, էջ 258, 266 և հտ.:

Հիմնականում երկու խոշոր միավոր՝ Լփինք (որն Ալբանիա անվան հայկական մի այլ ձևափոխությունն է) և Մաղքթաց երկիրը՝ Չոդ կամ Չոր մայրաքաղաքով։ Այս հանգամանքը հաստատող ամենապորավոր վկայություններից է Աղվանից կաթողիկոսության տիտղոսանիշը, որի մեջ առկա էր այդ կաթողիկոսությանը ենթակա երկրամասի վարչական բաժանման պատկերը։ 551 թ. սկսած «կալան սովորությունն գրելի պարուակի թղթոյն «Աղուանից, Լփնաց և Չորայ կաթողիկոսի»⁴⁵։ Սա այլ բան չէր նշանակում, քան Արևելյան Անդրկովկասում վարչական երեք միավոր տեսնելը։ Դրանցից երկուսը վերոհիշյալ Լփինքն ու Մաղքութը—Չորն էին, որոնք ընդգրկում էին հունա-հռոմեական աղբյուրների ձևանշած Ալբանիա երկիրը։ Իսկ երրորդը հայկական աղբյուրների Աղվանքն էր կամ Կուրի ու Երասխի միջագետքը։

Ինչ վերաբերում է «Առան», «Արան», «Ռանի», «Ալ-Ռան» խմբին, պետք է հաստատապես ասել, որ այս բոլորի հիմքը հայկական «Առան»-ն է՝ իր անվանդակաՆ-սլատակաՆ հիմքով ու տրամաբանությամբ։

«Առան» անվամբ կոչվել է Արցախի կենտրոնական ու ամենամեծ դավառը՝ Մեծ-Առանը։ «Առան»-ը մտնում էր նաև Ուտիքի Առանոտտ (Առանոտտ), Առանձակ (Առան-ձակ) գավառանունների մեջ։ Հնարավոր է, որ այս երկու նահանգները միասին էլ հնուց ի վեր կոչված լինեին Առան ընդհանուր անունով, որովհետև, ինչպես վերը՝ խորենացու վկայությունը քննելիս տեսա՞ք, հայկական անվանությունն Առան նախնուց սերված էր համարում այս գավառների հայ բնակչությունը, ինչպես նաև նրանց հայ իշխանական տները (Առանշահիկները)։

Առան ասելով Կուրի աջափնյակն էին հասկանում նաև վրացի⁴⁶ ու պարսիկ հեղինակները։ Պարսկական հինավուրց մի աղբյուր՝ Զահաղաշտական օրինագիրքը, Որմիզդին է վերագրում 16 ղանաղան բարեբեր երկրների ստեղծումը, նրանց շարքում հիշում է Առանը՝ Արաքսի ձախ ափին, ապա նշում, որ «Առանը Հայաստանի մասն է՝ ամենաբարեխառն կլիմայով»⁴⁷։

Հայ պատմագիրները (Վարդան Արևելցի, Ստ. Օրբելյան, Կիրակոս և այլք, ինչպես նաև վիմագրական բաղմաթիվ նյութեր) «Առան» անվամբ կոչել են միայն Կուրի աջափնյակը, որ «իսկապես բարեխառն կլիմա ունի. հարևան Փայտակարանի համեմատությամբ՝ զով, լեռնոտ հյուսիսի (Ալբանիա—Դադլուտան) ու Հյուսիսային Հայաստանի համեմատությամբ՝ տաք։ Եվ եթե շրջակա լեռնու վայրերի բնակիչները՝ թե՛ հայերը, թե՛ ադրբեջանցիները, և թե՛ Դադլուտանի տարալեզու տները, «Արան» ասելիս հասկանում են «տաք երկրամաս», այդ ոչ թե նրանից է, որ Դադլուտանի ինչ որ լեզվով «արան» նշանակում է «տաք», ինչպես կարծում է Յուսիֆովը, այլ որովհետև այդ լեզվով խոսողներն «Արան»—«Առան» երկրամասի հետ սկզբից ևնթ զուգորդել են տաք վայրի ըմբռնումը, և դա էլ արմատավորվել է նրանց դիտակցության մեջ։ Հնում նման էրևոյթ տեղի է ունեցել նաև «Սիրիք» անվան հետ։ Ոչ սիրիքիների համար այն սառն ու ցուրտ երկիր է ճանաչվել, և հաճախ Սիրիքյան երկ-

⁴⁵ Կ ա դ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 392։

⁴⁶ Տե՛ս «Համառոտ պատմություն Վրաց ընծայեալ Զուանշերի պատմի», Վենետիկ, 1884, էջ 29, 73, 75։

⁴⁷ «История религии древнего мира. Персия», СПб., 1883, т. III, էջ 148։ Նաև՝ «Բառարան պարսկերեն», Պոլիս, 1826, էջ 102։

բամասի հետ ոչ մի առնչություն չունեցող որևէ տեղ ևս կոչել են «սիրիք» միայն այն պատճառով, որ վերջինս ևս ցուրտ վայր է եղել:

Իստանալով արարական աղբյուրներին, պետք է ասել, որ վերջիններիս համար Առանը հիմնականում երասխի ու Կուրի միջև ընկած տարածքն է, որն արևմուտքում հասնում է մինչև Սեանի ափերը:

Յակուտ ալ-Համավին իր «Աշխարհագրական բառգրքում» Առանի մասին գրում է. «Առան» պարսկերեն անունն է ընդարձակ նահանգի, որ բաղմաթիվ քաղաքներ ունի: Դրանցից են Ջանդան (Գանձակ)... Պարտավը, Շամքորը, և Բալլականը: Իսկ Ադրբեջանի (Ատրպատական) և Առանի միջև Առուս (Երասխ) կոչված գետն է, որի հյուսիսային և արևմտյան ափերի վրա տարածված դավառները Առանի մասն են կազմում, իսկ արևելյան եզերքի երկրամասը պատկանում է Ադրբեջանին: Նասրն ասում է, թե Արմինիայի նահանգներից մեկն է Առանը, որը Սիսականի հետ միասին է հիշատակվում»⁴⁸:

Ինչպես պարզ էրևում է, արաբները Հայաստանին պատկանող Առան են կոչում այն երկրամասը, որ նորենացուց սկսած՝ հայ հեղինակների կողմից ձանաչվում էր որպես Աղվանք, ինչպես նաև Առան:

Սակայն երբ հարցը վերաբերում էր ամբողջ Հայաստանին ու նրա հարևան Ալբանիային, արաբները վերջինս կոչում էին Առան և այն Հայաստանից անջատում Կուր գետով: Օրինակ, հենց մեր վկայակոչած ալ-Համավին ասում է. «Քուրը (Կուր) գետ է Հայաստանի և Առանի միջև»⁴⁹: Արաբները Կուրի աջափնյա Առանն ու ձախափնյա Առանն էլ համարում էին վարչա-քաղաքական ու ազգագրական տարբեր: Նահանգներ: Իբն-Հաուկալ աբաբ մատենագիրը (գրել է 977—978 թթ.) անդրկովկասյան վարչական միավորումները թվարկելիս հենց այդպես էլ հիշում է՝ «երկու Առաններ» և սա կրկնվում է երկու անգամ՝ հարկատու նահանգները թվարկելիս⁵⁰:

Դիտելով «Առան» տեղանվան գերծածույթյան ուղորտը հարյուրամյակների ընթացքում, նկատում ենք մի հետաքրքիր երևույթ. այնպես, ինչպես «Աղվանք»-ը պատմական մի փուլում լինելով Կուրի ձախափնյակի տարբերակիչը, հետագայում ոտք դրեց աջափնյակ, տարածվեց նաև այս երկրամասի վրա, հետագայում դառնալով բացառապես նրա անունը, այդպես էլ նախապես միայն աջափնյակի հետ կապված «Առան»-ը արաբների օրոք (և հենց այդ արաբների երկերում) մեկ-մեկ տարածվում էր նաև Կուրի ձախափնյակի վրա: Սակայն անդրկովկասյան Աղվանքի վրա Առան անունն արմատներ չձգեց, չհիմնավորվեց, որովհետև նույն արաբներն այդ երկրամասում ստեղծեցին վարչական նոր միավորումներ՝ Դերբենգի, Շիրվանի ու Շաքիի իշխանությունները, որոնց անուններով էլ հետագայում սկսեցին կոչվել նրանց զբաղեցրած տարածքները:

⁴⁸ «Արարական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց Հ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 12:

⁴⁹ Նույն տեղում, էջ 102:

⁵⁰ «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. 38, Тифлис, 1908, էջ 99—100, 105—106:

ТОПОНИМЫ «АЛБАНИЯ», «АГВАНК» И «АРАН»

Б. А. УТУБАБЯН

(Р е з ю м е)

В статье слово «Албания» интерпретируется как кельтское, связанное с миграциями кельтских племен, которые обозначали этим словом разные географические местности: северную Шотландию, северную Италию, часть Балкан и северо-восточное Закавказье. «Албания» по-кельтски — «страна гор» (алб — алп = гора, ня — страна). Примечательно, что эти географические районы, названные «Албанией», гористы.

Слово «Албания» под влиянием армянского модифицировалось в «Агуанк» — «Агванк». Однако «Агванку» не суждено было стать топонимическим названием страны, которая у греко-римских авторов называлась Албанией. Дело в том, что в начале V в. персидская деспотия ликвидировала армянское царство и создала марзпанства. В одно из персоподданных марзпанств входила Кавказская Албания, а вместе с ней и две армянские области — Арцах и Утик, занимавшие междуречье Куры и Аракса. Армянскими авторами это марзпанство также стало называться «Агванком».

Это новое содержание названия долго сохранялось: области Утик и Арцах со своим армянским населением и «с самого начала армянским» (как свидетельствует Каганкатваци) княжеским домом Араншахиков добились определенной самостоятельности, создали даже свое царство (напр., во время Вачагана Благочестивого, позднее — при Амаме Арелелци), в источниках также именуемое Агванским. На территории же древней Албании появились новые политические образования — Дербенд, Ширван, Шаки, вследствие чего левобережье постепенно распрощалось со своим древним названием «Албания» («Агванк»).

Автор утверждает, что термин «Аран» восходит к древним топонимическим названиям армянских гаваров Мецар'анк (Мец-Аранк — Большой Аран в Арцахе), Арандзак («Аран-дзак» в Утике) и Аранрот («Аран-рот» в Утике). Этимологически слово «Агванк» армянской традицией связывается с именем Арана, наместника царя Вагаршака, владения которого простирались на территории междуречья Куры и Аракса. Действительно, не только армянскими, но и персидскими, грузинскими, а в дальнейшем и арабскими авторами Араном было названо правобережье Куры. Позднее, подобно тому, как названием левобережного края («Агванк») стали обозначать правобережье, Араном нередко называли еще и территорию классической Албании, однако и в таком понимании «Аран» был вскоре вытеснен вследствие указанных выше процессов по образованию Дербенда, Ширвана и Шаки.